



# ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. Էջմիածին, Ս. Զատիկ, 1978

Նորին Ամենապատութիւն  
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան  
Պատրիարք Երուսաղէմի Հայոց  
Ե Ր Ո Ւ Ս Ա Դ Ի Մ

## «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԽ Ի ՄԵՌԵԼՈՅ»

Սիրելի Սրբազն Եղբայր Մեր,  
Յարուցեալ Փրկչի Խջման Սուրբ Սեղանէն այսօր երջանիկ  
ենք Զերդ Ամենապատութեան բերելու նուիրական աւետիսը  
Սուրբ Յարութեան հրաշքին, որ աշխարհն ու պատմութիւնը՝ ու-  
ցուց կենարար ու ստեղծարար շնորհներով եւ մանաւանդ սիրոյ եւ  
խաղաղութեան շունչով։

Մեր օրերուն առաւել քան անցեալի մէջ, տագմապներով լի  
մարդկութիւնը ծարաւ ունի Քրիստոսի փրկարար սիրոյն եւ շր-  
նորհներուն, համելու համար ազգութիւններու միջեւ համերաշն  
գործակցութեան եւ իրաւ խաղաղութեան նաւահանգիստը։

Այսօր, Սուրբ Զատիկի լուսարացին, թող համայն աշխար-  
ին ու նաև մեր Մայր Եկեղեցիին եւ մեր հարազատ ժողովուրդին  
առատապէս բաշխուին ամենայաղթ շնորհները Սուրբ Յարութեան  
Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի։

Սուրբ Յարութեան շնորհներով, նաև առաւել լոյս եւ ա-  
ռաւել հոգեշէն եռանդ Զերդ Ամենապատութեան, Սուրբ Արք-  
ուիր զինուորեալ միաբանութեան ուխտապահ անդամներուն եւ  
համայն մեր հաւատացեալ գաւակներուն։

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ. Ա. Զ. Գ. է. Ն. Ա.

ԿԱԹՈԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ